

նապէս յառաջ քաշեց քրիստոնեաներին և հասցրեց բարձրագոյն պաշտօնէութեանց և բոլորովին քրիստոնէական աղդեցութեան տակ ընկաւ. Արա յաջորդները սակայն, մանաւանդ սոսկալի աշխարհակալ Կիեւ-Լոնզը (1735—1596), որ Բուգդայականութեան շատ յարած էր, յաճախ կրինուող երկարաւան ու արիւնալի հալածակներ յարոյց քրիստոնէից գէմ և այդ ժամանակ հազարաւոր զոհեր տարաւ կրօնական մոլեռանդութիւնը. Այս հալածակների պատճառը յիսուսականների չափազանց եռանդն էր, դրանք անշուշտ նեստորականներին ևս դարձնելու փորձն արած կը լինէին և նրանց թիւն այդ կրօնական կոիւներից առաջ անկասկած շատ նուազած կը լինէր.

Այս է աչա անկախ ներքին ասիական քրիստոնեայ եկեղեցու վախճանը, Խորասուզուած և մոռացած, մասամբ գիտմամբ մոռացուած Թուրքեստանի նեստորական քաղաքակրթութեան վերայ հաստատուած տէրութեան գոյութիւնը. Աչա Իլի գետի շրջանում: Սեմիրիէլինսկ քաղաքի մօտ, Իլշեալ պարոնները Պոյարկով և Պանտուսովը քիչ ժամանակ առաջ (1886-ից սկսած) գտան մի շարք նեստորական տապանաքարեր և բազմաթիւ այլ քարեր արձանագրութիւններով ծածկուած: Գրութիւնը աստրական էր և յաճախ փորագրուած խաչի նշանը նրանան ուսւական սուրբ Գէորգի խաչին: Քարերի վերայ եղած անուններն են օրինակ՝ Մարիյու—Յուխաննան (= Տէր Յովչաննէս), որ զարմանալի կերպով յիշցնումէ Յովչաննէս երեցին, ապա Ալէքսանդրոս, Յուլիա, Պետրոս, Դբանց Հետ միասին կարգումներ և թրքական—մողոլական անուններ, ինչպէս Նոնդու, Մասկուտ. Առն—գուրիւկյայ ևն: Մեր աչքի առաջ կենանանում են մի ամրող շարք եպիսկոպոսներ և քարոզիչներ իրենց կանանցով և որդիկանցով, գրանցից շատերի բնաւորութեան ամրագլ նկարագիրն ենք ստանում: Այս տեղ թագուածների մաշուան տարեթուերը գտնուումէն 850—1320 թ. մէջ, Ասպէս ուրեմն այս քարերը զարմանալի վկաններ են մի մեծ անցեալի:

Եղագայ հետախուզութիւնների ժամանակ կը յաջողի անշուշտ աւելի ևս լցո սփռել այն ժամանակների և մանաւանդ Քետացցո տէրութեան պատմական յարաբերութիւնների վերայ: Խոչպէս Լոռոսորի մումիաններն և Կույտնջուկի աղիւսները, այսպէս և Իլի երկրի յուշարձանները պիտի խօսեն անցած գնացած աղգերի ձակատագրի մասին:

Մի բան արգէն այժմ իսկ հաստատ է: Նեստորականութիւնը մեծ զօրութիւն ունէր երբեմն Խոհայում և այդ զօրութիւնը գործ է գրել ոչ նուիրապետական, այլ քաղաքակրթական ձեռով և

այնու մի այնպիսի նշանակութիւն է ձեռք բերել, որ արժէ արձանագրել պատմութեան տարեգրութիւնների և աղդագրութեան էջերի վերայ: Դա հելլենական իմաստութեան և գիտութեան պահան է եղել և երկուսն էլ միջնորդաբար հասցրել է այն աղգին, որ այն ժամանակ հոգեկան կեանքի բարձրագոյն զարգացումն ցոյց տուաւ և իւր կողմից հների երկերի ուսումնասիրութիւնը կրկին Արևմուտքին հասցրեց փոխանցարար: Այս նեստորականութեան մնայուն և համաշխարհական նշանակութիւնն է: Դրա հակառակ անցել է քրիստոնէական նեստորականութեան աղդեցութիւնը միջին, արեւելեան և թուրք—մողոլական Խոհայի վերայ աղդերի գաղթականութեան փոթորկի մէջ, անցել և ոչնչացել է այդ աղդեցութիւնը այնպէս ինչպէս շատ այլ քաղաքակրթութիւններ այլ տեղերում և այլ ժամանակներում:

Թարգմ: Ն. Ք.

ԱՌԱԾՆԵՐ ՎԱՆԱՑ ԲԱՐԲԱՌՈՒՈՎ.

Մէկու տունց չեն
էրկին կիսաշէն
իրեքն խմուվ աւեր:

Մէկ օր կանի բարուց բարեկենդանք.
Մէկէւ օր կը նստի սկոտանգ:

Մէկ արագ, մէջ վարագ,
նս մացի անկարագ:

Մէջ ծաղկներաց դուղաղ.
Մէջ Խաւեթերաց դառդան:

Մշակ առէկ էներ,
նոր տուն մշակ կենէր:

Ենրու ու զարի, իմ խոնցաւ
հարընիւ վեր քն բարի:

Նախիր էկաւ վեր զարին.
Նախրորդի ննիկ կայսաւ վեր բանին:

Նանէն մատադ քո սիվտակ օտներաց.
Ասաց դառդան ուր ժգերաց:

Նէ գոյով նէ շերեփով՝ Համա սփով (բռով):

Նէ զաշտի մրգինի՝

Նէ սարի թորինի:

Նէ կսիկ ունիմ կծան,

Նէ նէր ունիմ ծնծան:

Նէ վեր գուեն կը կայսի,

Նէ վեր շերֆին կը զարժի:

Նատեր պաղ սրախին,

Նը ծնծայ փուցն ու քամն:

Նստած մարտ թախտ փուց կը կարծի:

Եալվախով մ բիրեմ թէ մախլախուն:

Եատ արողին շակէ շապիկ,

Զիշ արողին շարէ շապիկ:

Են կենայ մեր տնիկ,

Ենուշ կենայ մեր կսիկ:

Եիսական որ շփոթի,

Չարոփի ուսներ կը զիւտի:

Ոչ կու կեղայ. ոչ կու բռայ:

Ոչ չայի խոնկ ի, ոչ թուրքի ուզութունկ ի:
 ... ունիս բառու, հակիմ կածես գաղու:
 Ով կիրակին կիրակուու շապիփ,
 Մը զդոնքի կրակին մաշի:
 Որ ունիս լաւ կի՞ն / ոչ ունիս խարխստուն,
 Որ ունիս մեռել տունդ, ինչ ունիս ժամառուն:
 Ուզէ հարուատի կատուն,
 Մուզէ աղքոտի խաթուն:
 Ունիս ու բարտին, խետ ուր գեալորին:
 Ուսասաց Խաղաթ խոր ինէ,
 Ուտել խմել դոր ինէ
 Զեռնեն չկայ յինը ինէ:
 Չամչից խատ խատ
 Մեղրից մատ մատ,
 Կիրիչկեմ տեղը զարտակ:
 Զարոց մարտար, բարուց տղիմար:
 Զիմ զովար քօ խորոտութեն,
 Կը զովամ քօ խորորութեն:
 Չուրի աղը խամնի, մատաղը կը խանգի:
 Չուտին տամ ունեւորաց,
 Երթամ զաս առաքելոց:
 Պարկով լուս ի թէ:
 Պիտուն ի նող չպէտք յարեգակ:
 Պղնջի նու աղօօր ինէր,
 Պուտկի նու տէգերզկայ խեռ:
 Պուտուկ ասեց - իմ տակ ուկի ի,
 - տատի կուզամ ասեց չերնի:
 Սեւ սէրակեր
 Քընց վանայ խաւքին էլ վեր:
 Սեւսն՝ զարկեր կեւտէն:
 Սուս սրտացաւ,
 Սոված փորացաւ
 Սրտի սիրած նար էմի,
 Գլուխ քաշաւ տազ էմի:
 Վայ հոգին՝ որ ընկաւ որդիս:
 Վաս օր կադեկնայ,
 Վաս մարդ չադեկնար:
 Փառ ք քէ վշրուն.
 Յէր եռացիր կապր պառուկ:
 Ըուրկան պորիկ է:

Ս. ՀԱՅԱԿԱՆ.



ԲԱՆԱԿԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐԺԱԿԱՆ

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Մեր ներկայ ուսումնարանները որքան
 էլ գերազանց լինին հին ուսումնարաններից,
 դարձեալ շատ բան ունինք զեռ անելու
 դրանց կազմակերպութեան համար, շատ թե-
 րութիւններ կան մեր մանուկների կրթու-
 թեան գործը կանոնաւորելու համար: Ճըշ-
 մարիտ է, մեր հին ուսումնարանները շատ
 մակողմանի էին, բայց միթէ միակողմանու-
 թիւնից ազատ են նաև մեր ներկայ ուսում-
 նարանները, միթէ կարող ենք հանդիսաւ խըդ-
 ճով ասեր թէ մեր ուսումնարաններում ուս-
 ման հիմքն այնքան լայն և հաստատուն է,
 որ կրթութիւնը ներդաշնակ և լրացած ամ-

բողջութիւն է կազմում: Անշուշտ ոչ: Եւ
 այդ գատավձիուր գժուար չէ կարդալ եթէ
 ի նկատ առնենք, որ ներկայ մանկավարժու-
 թիւնը կրթութեան զործում երեք զիսա-
 ւոր ձիւդ է որոշում՝ կրթութիւն մարմնի,
 կրթութիւն մարդի և կրթութիւն զգացմունքի:
 Այդ մարդկային բնութեան այս երեք կող-
 մերի համաշաւասար և ներդաշնակ զարգա-
 ցումը միայն կարող է համապատասխանել կրր-
 թութեան նպատակներին: Ծայց միթէ կա-
 րող ենք պնդել թէ մարմնի, մարդի և զգաց-
 մունքների կրթութիւնը մի ներդաշնակ ամ-
 բողջութիւն ին կազմում մեր ուսումնարան-
 ներում և նոյն իսկ շատ կան այնպիսի ու-
 սուցիչներ, որ կարող լինեն ըմբռնել այդ ներ-
 դաշնակութեան իմաստը և նշանակութիւնն
 ուսումնարանական գործում:

Մեր ուսումնարաններում աշակերտնե-
 րի ֆիզիկական կրթութիւնը, զբա հետ էլ
 ուսումնարանական ողջակեցիք պայմանները,
 համարեա թէ բոլորովին անուշադրութեան ին
 մատնուած: այսօր մենք չենք կարող մատ-
 նացոյց անել մի ուսումնարանի վրայ որ այդ
 կողմից գոհացուցիչ զրութեան մէջ լիներ: Մի-
 ևնոյնը կարելի է ասել նաև զգացմունքների,
 սրտի կրթութեան վերաբերմանք: Ճշմարիտ
 է, կրօնը աւանդելի առարկաների մէջ առա-
 ջին տեղն է բոնում բայց գժուար թէ կա-
 րողանանք պնդել որ զա առաջին տեղն է
 բոնում նաև իւր նպատակին ծառայելու վե-
 րաբերմանք: մեր դպրոցնում գեռ կրօնի վրայ
 նայում են որպէս զիտելիքի, աշակերտի մոքի
 պաշարը աւելացնելու աղբիւրի վրայ: Ճան-
 մատարար գերազանց զրութեան մէջ է մարդի
 կրթութիւնը:

Սակայն մեր ինչպէս եկեղեցական-ծխա
 կան նոյնպէս և թեմական զպլոցների ծրա-
 գիրների մէջ մանումէ երկու առարկայ ևս,
 որոնք մեծապէս կարող էին նպաստել ոչ միայն
 աշակերտի մատուոր կրթութեան, այլ և զգաց-
 մունքների ու գեղարուեստական ճշշակի կրր-
 թութեան: Մեր խօսքը նկարչութեան և ե-
 րածշառութեան մասին է, որոնք մեր դպրոց-
 ներում ամենից աւելի անուշադիր են թողած
 և եղած-շեղած մի հաշիւ են կարծես: Սա-
 կայն այդ երկու առարկաներից երգեցողու-
 թիւնը զեռ փառ է: երաժշտութիւնից գո-
 նէ երգը այնքան էլ մոռացութեան չէ մատ-
 նուած չնորհիւ այն հանգամանքի, որ զա մի
 տեսակ շուքի, զարդի զեռ է կատարում: — մեր
 դպրոցների աշակերտները հանդիսաւոր և տօն
 օրերին պէտք է պատշաճաւոր երգեր երգեն
 և եկեղեցում ժամասացութեան մասնակցին: